

ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող,
sushovh@mail.ru,
093-51-99-54,
ORCID 0000-0001-8718-6079

DOI: 10.54503/1829-0116-2022.2-213

ՐԱՖՖԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՐՍԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

Բանալի բառեր՝ Րաֆֆի, Հովհաննես Թումանյան, Ալեքսանդր Գոլոշյան, «Սամվել», ազգային ինքնագիտակցություն, «Մշակ», «անհանգիստ հոգի»:

Հոդվածը ներկայացնում է Րաֆֆու դերը Թումանյանի կյանքում և երկու գրողների անձնական ու ստեղծագործական առնչակցությունը:

Բանաստեղծի մտավոր զարգացման, հոգևոր հարստացման համար կարևոր նշանակություն է ունեցել ինչպես Րաֆֆու ստեղծագործությունը, այնպես էլ նրա հետ անձնական շփումները 1885-1888թթ.:

Թումանյանը բարձր է գնահատել մեծանուն գրողի դերը և՛ հայ վիպասանության մեջ, և՛ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում, թեև մերթնդմերթ նրա ստեղծագործությանը մոտեցել է քննադատաբար և «ոչ հոգեբանական անթիվ տիպեր» էր տեսել նրա վեպերում: Որքան էլ Թումանյանը համամիտ չլիներ Րաֆֆու որոշ հերոսների արարքների հոգեբանական հիմնավորման հարցում, այնուամենայնիվ 19-րդ դարի հայ արձակի պատմության մեջ խաչատուր Աբովյանից հետո Րաֆֆին էր՝ իր գրապատմական և ազգային -ազատագրական պատմության մեջ խաղացած դերով արժանացել Ամենայն հայոց բանաստեղծի հիացմունքին ու բարձր գնահատականին, դարձել նրա ամենից սիրված գրողներից մեկը:

* Ընդունվել է տպագրության 14.12.2022 թ.:

RAFFI IN THE CONTEXT OF HOVHANNES TUMANYAN'S SPIRITUAL ENRICHMENT

Key words: Raffi, Hovhannes Tumanyan, Alexander Goloshyan, “Samvel”, national self-awareness, “Mshak”, “anxious soul”.

The article presents the role of Raffi in the Tumanyan' life and personal and creative touch of two writers.

For intellectual development and spiritual enrichment of Tumanyan was important not only Raffi's creativity, but also the personal relationship with him in the years 1885-1888.

Tumanyan appreciated the role of an outstanding writer in the development of Armenian novel, as well as in enhancing the national identity of the Armenian people, although at times was approaching his works critically and seen in his novels “ a lot of not psychological characters”. And yet, no matter how Tumanyan did not agree with Raffi on the issue of psychological validity and credibility of actions and behavior of some of the characters, however, in the history of the Armenian prose of the 19th century it was Raffi who continued the traditions of Khachatur Abovyan and with his role in the history of Armenian literature, and the national liberation movement won the admiration and appreciation of the Poet of all Armenians, became one of his favorite writers.

СУСАННА ОВАНЕСЯН

д. ф. н., доцент, ведущий научный сотрудник отдела Институт литературы им. Манука Абегамяна НАН РА

РАФФИ В КОНТЕКСТЕ ДУХОВНОГО ОБОГАЩЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА

Ключевые слова: Раффи, Оганес Туманян, Александр Голошян, «Самвел», национальное самосознание, «Мшак», «беспокойная душа».

Статья представляет роль Раффи в жизни Ованеса Туманяна и личные и творческие соприкосновения двух писателей.

Для интеллектуального развития, духовного обогащения Туманяна важное значение имело не только творчество Раффи, но и личное общение с ним в 1885-1888 гг.

Туманян высоко оценивал роль выдающегося писателя как в развитии армянской романистики, так и в повышении самосознания армянского народа, хотя временами подходил к его творчеству критически и видел в его романах «множество не психологических персонажей». И всё же, насколько бы Туманян не был согласен с Раффи в вопросе психологической обоснованности и убедительности поступков и поведения некоторых героев, тем не менее, в истории армянской прозы 19-го века именно Раффи был продолжателем традиций Хачатур Абовяна и своей ролью в истории армянской литературы и национально-освободительного движения удостоился восхищения и высокой оценки Поэта всех армян, стал одним из его самых любимых писателей.

Ներածություն

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայ ազգային-ազատագրական շարժման վերելքը ամբողջ խորությամբ բացահայտեց Րաֆֆու ստեղծագործական տաղանդի հնարավորությունները: Իր վեպերում ամենից շատ Րաֆֆին արտահայտեց ազգային ազատագրական պայքարի գաղափարը: Նրա պատմափիլիսոփայության առանցքը ազգային միասնության գաղափարն էր: Վիպասանը հայրենասիրությունը որպես բացարձակ արժեք հակադրեց կոսմոպոլիտիզմին և այն, ինչպես և դավաճանությունը ներկայացրեց նաև մարդկային հոգեբանության ոլորտում: Րաֆֆու վեպերը հսկայական ազդեցություն են ունեցել հայ հասարակության վրա: Րաֆֆու երկերում առկա է հակադրականության մոդելը, աշխարհը երկվության, իրականի ու իդեալի, չարի ու բարու երկփեղկվածության ռոմանտիկական պատկերացումների համակարգը (Սարինյան, 1985, 296): Չնայած վիպասանի ունեցած տեղին ու դերին՝ մեր գրականության պատմության մեջ նա համեմատաբար քիչ ուսումնասիրված հեղինակներից է: Րաֆֆու մասին առաջին երկու աշխատությունները գրվել են մինչև խորհրդային տարիների հարուցած արգելքները՝ 1929թ. (Վանանդեցի, 1928): Այնուամենայնիվ, Րաֆֆու ստեղծագործությունները հայտնվում էին հայ գրականագետների ուշադրության կենտրոնում նաև 30-ական թթ. (Մանուկյան, 1932): Սակայն Րաֆֆիագիտության մեջ հիմնաքարա-

յին արժեքներ ստեղծեց ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը: Նրա ծավալուն աշխատությունները ունեցան հեղաշրջող նշանակություն և ստեղծեցին ռաֆֆիագիտության դպրոց, որն ուղղորդել և ուղղորդելու է այդ ասպարեզում յուրաքանչյուր ուսումնասիրողի (Սերգեյ Սարինյան Ս., 1957, 1966, 1985): Նա այնպես համակարգեց վիպասանի ու հրապարակախոսի գաղափարները ու կերպարները, սյուժեներն ու գեղարվեստական կերպարները, որ հստակ ցուցադրեց, թե ինչպես է Րաֆֆին հստակեցնում հայոց պատմությունից, հազարամյակների փորձից դասեր առնելու անհրաժեշտությունը, թե Րաֆֆին ինչպիսի ազգային ծրագրեր ու համամարդկային երազանքներ է կտակել ապագա սերունդներին: Թեև վիպասանի կյանքն ու ստեղծագործական ուղին (Սամվելյան, 1957, 1987), գեղագիտական հայացքները (Թոփչյան, 1971) առանձին ուսումնասիրության առարկա դարձան, սակայն առաջսօր քննության նյութ չեն դարձել գրողի ժամանակի և հաջորդող շրջափուլերի դասական գրողների և Րաֆֆու գրական առնչակցության հարցերը: Այս իմաստով կարևոր են հատկապես Թումանյան-Րաֆֆի գրական ստեղծագործական աղերսները, որոնց անդրադարձ է կատարել Էդ. Ջրբաշյանը իր «Թումանյանը և հայ գրականության ավանդները» գրքում: Նա մի ամբողջ ենթագլուխ հատկացնելով այդ խնդրին՝ Թումանյանի «Գիքորի» ծագումնաբանությունը կապում է նաև Րաֆֆու «Ոսկե աքաղաղի» հետ (Ջրբաշյան, 1994, 169-213):

Նկատի առնելով խնդրի արդիական նշանակությունը՝ պայմանավորված կոսմոպոլիտիզմի և հայրենասիրության հակադրության, հայրենիքի համար զոհաբերության գաղափարի արդիականությունը մեր օրերում՝ մեր նպատակն է հանգամանալից ու մանրամասն անդրադառնալ Րաֆֆի-Թումանյան առնչություններին, բանաստեղծի ինչպես գրական, այնպես էլ անձնական կյանքում: Հոգածում կիրառվել է կենսագրական և պատմահամեմատական մեթոդների համադրությունը: Այն հասցեագրված է ինչպես գրականագիտական, այնպես էլ ուսանողական լսարանին:

Թումանյանի ծանոթությունը Րաֆֆուն և նրա ստեղծագործությանը

Րաֆֆու երկերին Թումանյանը ծանոթացել է 12-13 տարեկանում Ջալալօղլում սովորելիս: Նա, օգտվելով դպրոցի տնօրեն Տիգրան Տեր-

Դավթյանի անձնական հարուստ գրադարանից, Ռ.Պատկանյանի, Ղ.Ա.Ղայանի և Ս.Շահազիզի երկերի հետ միասին առաջին անգամ առնչվում է Րաֆֆու ստեղծագործությանը՝ կարդալով Նրա «Փունջեր» ժողովածուն (Րաֆֆի, 1874): Այդ մասին վկայում է Տիգրան Տեր-Դավթյանի դուստրը՝ Վարսենիկ Գրիգորյանը (ԹԺՀ, 2019, էջ 202):

Ինչպես գրում է Էդ.Ջրբաշյանը. «Հայ գրականության պատմության գուցեև պատահական, բայց իմաստալի ու երջանիկ զուգադիպություններից մեկն է այն, որ պատանի Թումանյանը «հասցրեց» անձամբ հանդիպել ու ծանոթանալ հայ ռոմանտիկական արձակի մեծագույն դեմքի հետ» (Ջրբաշյան, 1994, էջ 169):

Րաֆֆու հետ իր հանդիպումների մասին վկայում է ինքը՝ բանաստեղծը: 80-ականների կեսերին 1886թ.փետրվարի 23-ից հետո մինչև մայիսի վերջերը 17-ամյա պատանի Թումանյանը Ադամյանի Համետը տեսնելու օրերին այցելում է կյանքի վերջին տարիներն ապրող 51-ամյա Րաֆֆու բնակարան. «Հենց այդ օրերը դեռ աշակերտ, եղա Րաֆֆու մոտ, երբ առաջին փռած «Սամվել» էր գրում ու սրբագրում» (Թումանյան, 1995, էջ 254):

Մարգար Ավետիսյանը վկայում է, որ այդ շրջանում «Աշակերտությունը Րաֆֆուն կարդում էր, ինչպես ասում են անքննադատ հիացմունքով, երբ Րաֆֆին պաշտելի հեղինակ էր, որի մասին քննադատական որևէ ակնարկ անհանդուրժելի էր» (ԹԺՀ, 2019, էջ 169): Դեռևս աշակերտ Մարգար Ավետիսյանի վկայությամբ հայերենի ուսուցիչ Ստեփան Մալխասյանցը դասարանում ասել էր, որ Տուրգենևին և այլ ռուս գրողների ծանոթանալուց հետո Րաֆֆու հմայքն ընկավ իր աչքում, և որ իր կարծիքով «Պռոշյանն ավելի երկար կապրի, քան թե Րաֆֆին: Այս հայտարարություններն ահագին հուզմունք, վիճաբանություն ու դժգոհություն առաջացրեցին» (ԹԺՀ, 2019, էջ 169):

Պատանի Թումանյանին զայրացնում էին տաղանդավոր գրողների ու արվեստագետների նկատմամբ անհարկի հարձակումները: Բանաստեղծը խոստովանում է. «Ոչ մի կերպ չէի հաշտվում էն ամենի հետ, ինչ որ խոսում էին...մանավանդ խոսում էին Գամառ-Քաթիպայի, Րաֆֆու և Ադամյանի¹ դեմ...Պատանեկան ասեմ, թե երեխայա-

1 Խոսքը անվանի դերասան, Համետի դերի անգուգական կատարող Պետրոս Հերոնիմոսի Ադամյանի մասին է(1849-4891): Շեքսպիրի պաշտամունք ունեցող Թումանյանը բեմի վրա տեսել է 6 հայ (Ադամյան, Կ.Գալֆայան, Նիկ. Հովհաննիսյան, Սիրանույշ, Ամո Խարազյան, Հովհաննես Չարիֆյան) և երկու, գուցե և ավելի (Էռնեստ Ռոսսի, Մամոնտ Դալսկի) Համետի դերակատարների, սակայն 1886-ից ամենից շատ սիրել է Ադամյանի ստեղծած Համետի կերպարը:

կան զայրույթով ծառս էի լինում, վիճում իմ միանգամայն չզիտեցած բաների մասին, պաշտպանում էի նրանց և շարունակ երագում տեսնել» (Թումանյան, 1995, էջ 254): Եվ նշվածներից Թումանյանը միայն Ռ. Պատկանյանին չհասցրեց տեսնել, իսկ Ադամյանին ու Րաֆֆուն հանդիպեց անձամբ: Ադամյանի հետ ծանոթանալու նպատակով 1887թ. փետրվարի 12-ին պատանի բանաստեղծը նույնիսկ բեմ բարձրացավ՝ ստանձնելով Ավարայրի դաշտում զոհվող զինվորի դերը Հ. Կարինյանի «Վարդան Սամիկոնյան» կամ «Վարդանանց պատերազմը» դրամայում, որտեղ Ադամյանը խաղում էր պատմիչ Եղիշեի դերը:

Ուշագրավ է մի միջադեպ դպրոցահասակ Թումանյանի կյանքում, որը վկայում է պատանի նրա հրապուրվածությունը Րաֆֆու ստեղծագործությամբ և կարող էր ազդակ հանդիսանալ «Նետոյի քարաբաղնիսը» պատմվածքի սկզբում ու վերջում գյուղացիների Նետոյին քարաբաղնիս անելու «հիմնավորումների» հետ. (սկզբում «Քանի հոգի են ազատվել քարաբաղնիսով» վերջում «Քանի-քանի հոգի են խեղդվել քարաբաղնիսից»): Ըստ Անուշավան Աբովյանի վկայության՝ աշակերտ Հովհաննեսը որոշում է կատակել և մի խումբ պատանիների ներկայությամբ կարդում է Րաֆֆու բանաստեղծությունը իբրև իր բանաստեղծություն.

Մտավ Արփին, պատեց խավար,

Մութ խավարը գիշերին,

Նինջ ու թմբիր ցանեց քունը

Լուռ և խաղաղ աշխարհին:

Ունկնդիրները սկզբում ասում են «խորություն չունի». «Սակայն բանը երբ բացվել է, ավելացրել են՝ «Ախր տեսանք, որ դա քո բանը չի, է՛»» (Թումանյան, 2019, էջ 218-219):

Րաֆֆու ազգային ազատագրական գաղափարաբանությանը ազդեցությունը

Առաջին այցից հետո (1886թ. փետրվարի 23-ից մինչև մայիսի վերջերը) Թումանյանը նորից մերթընդմերթ այցելել է Րաֆֆուն, մանավանդ վիպասանի կյանքի վերջին տարում 1888թ: Այս շրջանում բանաստեղծը շատ մտերիմ էր ազգային ազատագրական շարժման գործիչ Ալեքսանդր Գյուլշանի հետ և չի բացառվում, որ նրանք միասին են հաճախակի այցելել Րաֆֆուն:

Ինչպես հայ ազատագրական շարժմանը նվիրված հայ երիտա-

սարդությունը, այնպես էլ Ալ. Գոլոշյանը և Թումանյանը գտնվում էին Րաֆֆու ազգային ազատագրական գաղափարների ազդեցության տակ: «Կայծերի» ազդեցությանը պետք է վերագրել Ալեքսանդրի հայերնասիրական սիրանքը, ով անձամբ ծանոթ էր Րաֆֆուն և բացի գրական ներշնչումից՝ ազդվել էր նաև նրա «Կենդանի խոսքով»: 1888թ. Րաֆֆու մահվանից հետո հայրենիքը ազատագրելու նրա երազը իրականացնելու համար Թումանյանը Ալ.Գոլոշյանի հետ միասին որոշում է զենքով գնալ ու ազատել Արևմտյան Հայաստանը: Այդ նպատակով դեռևս նոր նշանված 19-ամյա բանաստեղծը վաճառում է իր ամառային վերարկուն և այդ գումարով գնում զենք: Սակայն 1888թ. հոկտեմբերի Գոլոշյանի և երկու այլ հայրենասերների հետ պետք է ճանապարհվեր Պարսկաստանի վրայով Արևմտյան Հայաստան, լինել Վանում, Բաղեշում և Սալմաստում. ծանր հիվանդությունը 2 ամիս շարունակ նրան գամում է անկողնուն: Թումանյանը չի հասցնում առողջանալ ու միանալ Ալ. Գոլոշյանին և նրա երկու ընկերներին, այդ թվում Հովհաննես Ազրիպասյանին, ովքեր սպանվում են Վան մեկնելու ճանապարհին:

Րաֆֆի գրողն ու հրապարակախոսը Թումանյանի ընկալումներում

Թումանյանը արձանագրում է, որ 80-ական թթ. ազգային ազատագրական պայքարի մթնոլորտը ձևավորվում էր Րաֆֆու վեպերի միջոցով: Բանաստեղծի խոսքերով «Վարար գետի նման հոսում էին Րաֆֆու վեպերը՝ անընդհատ ու խորհրդավոր» (Թումանյան, 1995, էջ 254):

Բանաստեղծի հրապուրանքը Րաֆֆու անձով ու ստեղծագործությամբ չի սահմանափակվում միայն պատանեկան հասակով: Դ.Դեմիրճյանը վկայում է, որ հասուն Թումանյանը նույնպես «Հիացմունքով էր խոսում Րաֆֆու մասին» (ԹժՀ, 2019, էջ 32): Սակայն դա չէր խանգարում, որ Թումանյանը երբեմն քննադատաբար մոտենար վիպասանի երկերին: Մարգար Ավետիսյանը պատմում է. « Երկար կանգ առանք Րաֆֆու «Սամվելի» վրա » : Այդ այն շրջանն էր, երբ աշակերտությունը-Րաֆֆուն կարդում էր, ինչպես ասում են անքննադատ հիացմունքով.... Թումանյանը հավանում էր Րաֆֆու նկարագրությունները, վառ երևակայությունը, լեզուն համարում էր ճոխ, բայց միաժամանակ գտնում էր, որ հեռու է ժողովրդական կենդանի լեզվից և ռուսաբանություն ունի:

իսկ երբ անցավ տիպերին, սկսեց վերլուծել նրանց հոգեբանությունը, գտավ, որ այստեղ Րաֆֆու գրիչը թույլ է, որովհետև դավաճանում է իրականությանը, ուրեմն և գեղարվեստին, որովհետև իսկական գեղարվեստը իրականության վրա է հիմնվում» (ԹԺՀ, 2019, էջ 169) :

Հուլազգրի խոսքերով Թումանյանն ասել է. «-Վա՛հ, ես տեսակ էլ սպանություն կլինի՛, որ կատարել է տալիս Րաֆֆին...-«...այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը...»: Ո՞րտեղ է ծնողասպան որդու հոգեբանությունը: Մի տես, թե Շեքսպիրը մինչև մարդ է սպանել տալիս, որքան է կանգ առնում բացատրելու սպանողի հոգեբանությունը: Ենպես է տալիս, որ կարդացողը ինքնին սպասում է, որ էլ սպանությունը պիտի կատարվի, թեկուզ հեղինակը չասի էլ թե՛ սպանեց: Սա նրանից է, որ Րաֆֆու մեջ խոսում է միայն տենդենցը, իսկ հեղինակի մերկ տենդենցը սպանել է գեղարվեստը» (Թումանյան, 1995, էջ 173-174):

Բանաստեղծի այս կարծիքը անուղղակի է ներկայացված՝ հուլազգրի խոսքերով: Իրողությունն այն է, որ տարբեր առիթներով Րաֆֆու ստեղծագործությանը անդրադառնալիս բանաստեղծը, հիրավի, բարձր է գնահատել մեծանուն գրողի դերը և՛ հայ վիպասանության մեջ, և՛ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում:

1888թ. ապագա կնոջ հետ առաջին ժամադրության ժամանակ պոետը ուրախանում է, երբ Օլգան հպարտությամբ է նշում Րաֆֆու «Սամվելը» կարդացած լինելու մասին:

Րաֆֆու թաղման օրը՝ 1888թ. ապրիլի 29-ին, սաստիկ անձրև էր, որը, իհարկե, չի խանգարել նրա երկրպագուներին, այդ թվում Թումանյանին, մասնակից լինել և վկայել, որ այդ վիթխարի բազմության առկայությունը հարգանք էր ոչ միայն Րաֆֆու անվանը, այլև գրականությանը: Բանաստեղծը արձանագրեց, որ հենց Րաֆֆին էր այն գրողը, ով բարձրացրեց հայ գրականության հեղինակությունը:

1913թ. ապրիլի 25-ին Թումանյանը նախաձեռնեց Րաֆֆու մահվան 25-ամյակին նվիրված հիշատակի երեկո, որի բացման խոսքում նա ասաց. «Քսանհինգ տարի առաջ...հայ ազգը ընկղմված էր խոր սուգի մեջ իր մեծ վիպասանի՝ Րաֆֆու մահվան պատճառով: Անցել են այդքան տարիներ, դեռ հայի աչքը չի ցամաքել... Ինքն անմատչելի էր հասարակությանը, հասարակական վայրերում գրեթե չէր երևում, շատ գործերի չի խառնվում և չնայած միշտ էլ նյութական մեծ կարիքների մեջ, ամբողջովին նվիրված էր իր գրական աշխատանքներ-

րին: Զսանհինգ տարի առաջ Րաֆֆու մահը մեծ սուգ էր հայի համար, ճիշտ է, բայց նա միևնույն ժամանակ և՛ գրականության հաղթանակն էր: Թիֆլիսի, ինչպես և ամբողջ հայությունը, դեռ տեսած չէր Րաֆֆիի թաղման պես մեծ հանդես: Նրանով գրականությունը սկսում էր հարգանք ու պատիվ վայելել հայի կյանքում:

Հայի հիացմունքը այնքան մեծ է դեպի Րաֆֆին, որ մինչև այսօր քննադատություն չի ուզում լսել նրա մասին, այլ միայն գովասանք ու կեցցե» (Թումանյան, 1995, էջ 531):

Րաֆֆու մահից հետո անգամ Թումանյանը շարունակում էր մերթընդմերթ այցելել վիպասանի ընտանիքին՝ տիկնոջը՝ Աննային և որդիներին՝ Արամին ու Արշակին: Այդպիսի այցելություններից մեկի ժամանակ իր հետ տարավ Ջիվանու որդուն՝ Գարեգին Լևոնյանին: Հետագայում արդեն իբրև գրողների ընկերության նախագահ գրողներին նպաստներ հատկացնելիս չէր մոռանում նաև տիկին Աննային: Րաֆֆու տղաներն իրենց հերթին մերթընդմերթ եղել են Թումանյանի բնակարանում: Այսպես, 1916թ. փետրվարին, երբ բանաստեղծի հարկի տակ հյուրընկալվել էին անգլիացի լրագրողներ Ալֆրեդ Բագհաուզը, Ջորջ Հարջկինը, նրանց խոսքը թարգմանում էր Արամ Րաֆֆին:

1913թ. դեկտեմբերի 12-ին Հայ գրողների կովկասյան ընկերության երեկոյթին Րաֆֆու մահվան 25-ամյակի առթիվ բանաստեղծի ելույթի մասին հաղորդումից պարզվում է, որ Րաֆֆին իր պատանի երկրպագուին ներկայացրել է «Մշակից» հեռանալու պատճառները և կարդացել է նրան Արծրունուն գրած իր մի նամակը: Թումանյանը ներկաներին վստահեցնում է, որ «փողը չէր» «Մշակից» Րաֆֆու հեռանալու պատճառը, այլ այն, մեր գրողն ու գրականությունը անպաշտպան էին. «Մամուլը այնպես էր բռնացած գրականության վրա, որ ինչքան էլ տաղանդավոր ու հռչակավոր լինեիր գրողը, այնուամենայնիվ, համարվում էր ես կամ էն թերթի զինվորը, ճորտը, և վայն եկել էր տարել, եթե համարձակվեիր հեռանալ կամ հակառակ կարծիք հայտնել: Ու մեր բոլոր գրողները, բոլոր տաղանդները հալածվում ու հայիոյվում էին ամենաանխնա կերպով, մանավանդ «Մշակի» կողմից» («Հորիզոն», 1913, № 281, էջ 3):

«Մշակի» ու Արծրունու նկատմամբ Թումանյանի վերաբերմունքը և բացասական գնահատականները պայմանավորված էին նաև Րաֆֆու և Ադամյանի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքով. Թումանյանը ասում է. «Եղ ժամանակ Րաֆֆին «Մշակի» մեջ էր և, թե

«Մշակն» էր մեծացնում, թե ինքն էր մեծանում հսկայաբար, և Գր. Արծրունին չէր կարողանում տանել, երբ տեսնում էր, որ արդեն Րաֆֆու շվաքն ընկնում է իր վրա: Եվ գրողի անհատականության, տաղանդի ազատագրության ու մամուլի կամ խմբագրի բռնակալության կոիվն էր, որ պայթեց ու դարձավ Րաֆֆու «Մշակ»-ից հեռանալու գլխավոր պատճառը» (Թումանյան, 1995, էջ 536):

Ուշագրավ է, որ Րաֆֆուն այցելելուց անմիջապես հետո Թումանյանը քայլերն ուղղում է «Մշակի» խմբագրատուն:

Բացառիկ մեծ է եղել Րաֆֆու հմայքը ինչպես ժամանակի երիտասարդության, այնպես էլ Թումանյանի վրա, և այն պահպանվել է երկար: Տիգրան Փիրումյանը պատմում է, որ իրենց ծանոթության ժամանակ (1891) բանաստեղծը արտակարգ բարձր կարծիքի էր «Սամվելի» և Նրա հեղինակի մասին: Այդ ազդեցությանը պետք է վերագրել, որ Թումանյանը իր առաջին չորս գավակների անունները վերցրել էր «Սամվել» վեպից՝ Մուշեղ, Աշխեն, Նվարդ, Արտավազ: Թումանյանի անձնական գրադարանում պահպանվում են ժամանակին հրատարակված Րաֆֆու ստեղծագործությունների տասնյակ գրքեր, այդ թվում (Րաֆֆի, 1882, 1886, 1890, 1895, 1890, 1895, 1898, հ. 1, 1891, հ. 2, 1893, 1905): Բանաստեղծը ձեռք էր բերում նաև Րաֆֆու մասին ստեղծվող քննադատական գրականությունը, ինչպես օրինակ Հ. Եսայանի «Րաֆֆի» աշխատությունը (1913) (Հ. Թումանյանի անձնական գրադարանը Երևանում, 1987, 138), Հ. Հայկազունու «Րաֆֆիի սգալի մահը և կենսագրությունը» (1988) (Նույն տեղում, 229) և այլն:

Եղվարդ Ջրբաշյանը նկատել է Րաֆֆու ազդեցությունը Թումանյանի ստեղծագործության վրա: Բանաստեղծը իր մի քանի երկերը գրելիս ազդակներ է ստացել Րաֆֆուց (Ջրբաշյան, 1994, էջ 169-211):

Րաֆֆին դարձել էր մտքերի տիրակալ, հենց այդ պատճառով 90-ականների կեսերին արգելվում են Րաֆֆու «Կայծերը», «Սամվելը», «Խենթը»: Րաֆֆու անունը Թումանյանի հոգվածներում առաջին անգամ հանդիպում է 1898թ. գրած սևագիր «Գրական լեզվի մասին» հոդվածում, որտեղ նա Րաֆֆուն անվանում է իր ժամանակին «գրականության գլխին կանգնած» (Թումանյան Հ., 1994, էջ 398) գրող, որի լեզուն 10 տարի անց «տակից մինչև գլուխ սրբագրվում է» (Թումանյան Հ., 1994, էջ 398) : Իսկ առաջին տպագիր խոսքը, որտեղ արձարծեց Րաֆֆու անունը, 1899թ. գրած «Սեր գրական վարք ու բարքից» հոդվածն էր, որում հակադրվում է «Նոր դարի» «Կանոնավոր կրթություն

Ե պակասում» առաջնորդողի այն հայտարարությանը, թե հայ գրողները բարձրագույն կրթություն չունենալու պատճառով մեծացնում են հայի հոռի ու տգեղ կողմերը, դրանք չափազանցնելով՝ հուսահատեցնում են ժողովրդին, հետևաբար ով հարձակվում է «իր ազգի պակասավոր կողմերի վրա, տիրացու է: Ինչո՞ւ, որ հայ գրողներին ասի տիրացուներ» (Թումանյան Հ., 1994, էջ 114): Իբրև օրինակ ու փաստարկ Թումանյանը հիշատակում է Րաֆֆու ստեղծագործությունը. «Մեր վիպասաններից արդյոք Րաֆֆին է այդպես վարվել իր խենթի, Զալալեղին, Խամսայի մելիքությունների, Սամվելի, Կայծերի, մինչև անգամ Խաչագողի հիշատակարանի մեջ» (Թումանյան Հ., 1994, էջ 115): Թումանյանը Րաֆֆուն համարում է այն գրողներից, որը թեև զուրկ է դիպլոմից, բայց ի ծնե կոչված է թափանցելու գործերի ներքնիմաստը, կարդալու սրտերի գաղտնիքը և խոսելու ժողովրդի հետ: 1907թ. «**Վիճակորդական հարգանք**» հոդվածում արգելում է Րաֆֆու անունը շոշափել իբրև խեղճ «երկու կոպեկը» ձեռքին գրող և խելոհությունն ու ողորմելիությունը չդարձնել հայ գրողին բնորոշող հատկանիշ (Թումանյան Հ., 1994, էջ 155): Իհարկե, երբ բանաստեղծը ինքը խոսում էր հայ գրողի նյութական ծանր վիճակի, նրա՝ միշտ անբարենպաստ պայմաններում ստեղծագործելու մասին, չէր մոռանում հիշատակել Արծրունուն ուղղված Րաֆֆու այն նամակը, որն ինքն անձամբ էր կարդացել և «որի մեջ գանգատվում էր մեր նշանավոր հրապարակախոսներից մեկին և հենց նույնիսկ նրա դեմ, թե միևնույն իրեն գրվածքներով ուրիշները կարդալ են սովորում ու զարգանում, իրեն սեփական երեխաները մնում են մի ետ ընկած գյուղում անուսում ու տգետ, ուրիշներն էլ կարծում են, թե ինքը անտարբեր ու անսիրտ ծնող է, միևնույն ճշմարիտն էն է, որ ինքը միջոց չունի և չի կարող քաղաք բերել, պահել և ուսում տալ իր զավակներին» (Թումանյան 1995, էջ 267): Այդ 16 էջանոց նամակում, որը Թումանյանը կարդացել էր Րաֆֆու տանը, բանաստեղծի վկայությամբ երկու տողն էր միայն վերաբերում վարձատրության խնդրին, «իսկ ամբողջը խոսում է բարոյական զրկանքի մասին» (Թումանյան 1995, էջ 536):

1912թ. Կովկասյան ընկերության՝ դեկտեմբերի 16-ի երեկոյթի եզրափակիչ խոսքում Թումանյանը Րաֆֆուն դասում է հայ այն դասական գրողների շարքը, որոնց թողած ժառանգությունը «արդեն նյութական հարստություն չի, այլ բարոյական, հոգեղեն, մտավոր, խոսքի ու բանի կարողություն» (Թումանյան, 1994, էջ 391):

Թումանյանը և՛ «ոչ հոգեբանական անթիվ տիպեր» (Թումանյան, 1994, էջ 410) էր տեսնում Բաֆֆու վեպերում, և՛ նրան անվանում էր «ապագա հեղափոխական ծրագրեր հղացող» (Թումանյան, 1994, էջ 534) վիպասան, ով «ազատության կռիվն էր բորբոքում» (Թումանյան, 1994, էջ 535) և ժողովրդի մեջ ստեղծեց մի տրամադրություն, որը խոր արմատներ գցեց նրա մեջ, որն ընկավ 90-ական թթ ազատագրական պայքարի հիմքը:

Դեմիրճյանի վկայությամբ գրական հասունության տարիներին, երբ գրողը վերազնահատում էր հայ գրականության արժեքները, թեև որոշ հարցերում քննադատում էր նաև Բաֆֆուն, այնուամենայնիվ հիացմունքով է խոսել Բաֆֆու մասին: Այդ հիացմունքն ամենից վառ արտահայտվեց Բաֆֆու գերեզմանի վրա վիպասանի մահվան 25-ամյակի առիթով արտասանած ճառում, որը Բաֆֆու գրապատմական դերի ու ստեղծագործության մասին Թումանյանի ամենաջերմ ու սրտառու խոսքն էր: Այն հնչել է 1913թ. մայիսի 5-ին իր իսկ նախաձեռնությամբ Բաֆֆու գերեզմանի մոտ տեղի ունեցած հոգեհանգստի արարողության ու մեծարման հանդեսի ժամանակ: Նա «Ճապոնացիների գեղեցիկ սովորության համաձայն» դիմում է Բաֆֆու հոգուն և ասում. «Ամմահ հոգի՛, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված, քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վիհներին ու տկարներին համարձակություն ներշնչեցիր ու զրկեցիր հզորների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արտասուքը, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի ոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը, Էսոր եկել ենք քո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ և մեր ցավերը, որ միշտ մնում են թարմ, և մեր զգացմունքները, որ համակված են քո շնչով ու հիշատակով» (Թումանյան, 1995, էջ 55) :

Թումանյանը օրհնում ու փառաբանում է Բաֆֆու տված անհանգստությունը, ազատության ճանապարհը և այն նահատակների շարքերը, որոնք գնացին Բաֆֆու մատնանշած ուղիով:

Դիմելով Բաֆֆու հոգուն Թումանյանը այն բնորոշում է **անհանգիստ**, որը միշտ է անհանգիստ լինելու, քանի չի հնչել հայ ժողովրդի ազատագրության ավետիսը: Պոետն ասում է. «Անհանգի՛ստ հոգի, անշուշտ, այժմ դու սավառնում ես էն դժբախտ աշխարհիքի երկնքում,

ուր քո մահից 25 տարի հետո, դարձյալ մի անգամ ավելի մեծ թափով ու սարսափով բարձրացել են հույզերն ու հույսերը, և թերևս հեռու չի օրը, երբ մենք կկարողանանք կրկին գալ քո շիրմի վրա ու կանչել-Արդեն կատարված է քո իղձը, ո՛վ անհանգիստ հոգի, ընդմիշտ վերացած ու վերջացած են Ենքան արյուններ, Ենքան կոտորած, և ամեն կողմից պանդուխտ հայազգիք դիմում են իրենց սիրուն հայրենիք... Արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է Նա հին դժոխքից, ապահով է անվերջ կոտորածներից ու հանգիստ անլուր հալածանքներից, դու էլ հանգստացիր քո հավիտենական կայանում, ով անհանգիստ հոգի» (Թումանյան, 1995, էջ 56):

Թումանյանի այս ելույթը հայ գրողի մասին երբևէ գրված ամենաշեղմ ու հուզիչ խոսքերից է, որն ասես արձակ բանաստեղծություն լինի: Այն շատերին ներշնչեց խորին հարգանքով առհասարակ դեպի գրականությունը, և թումանյանական «անհանգիստ հոգի» բնորոշումը կյանք ստացավ ու լավեց Նաև այլոց շուրթերից, այդ թվում բանաստեղծի որդու՝ Արտավազի: Երեք տարի էր անցել գրողի այդ ելույթից, երբ Նրա Արտավազը որդին, անվերջ շրջելով Արամայան Հայաստանի ու Վասպուրականի տարբեր շրջաններում ու գյուղերում, քրոջը՝ Նվարդին ուղղված Նամակում 1916թ մարտի 2ին Դիլմանից խոյ ընկած ճանապարհի մասին գրում է.«Ապա թե իմանաս ինչ գեղեցիկ, սրտառուչ վայրերով եմ անցել, բավական է տամ Ավարայրի դաշտի անունը... ինչ սքանչելի է...»

Ապա Կարմիր գետը, Վարդանի և Ղևոնդի Նահատակված տեղերը... Հեր և Չարեվանդ գավառները... Ես դաշտերով, ճամփաներով ի՛նչ թագավորներ, իշխաններ, ի՛նչ դեմքեր են անցել: Մնացել եմ զարմացած Բաֆֆու վրա, թե ի՛նչ վարպետորեն, ճիշտ և գեղեցիկ է նկարագրել ամեն մանրամասնություն, ի՛նչ թափանցող աչքեր է ունեցել Էդ **«անհանգիստ հոգին»**, ինչ զգացումներով է փայփայել իր ամեն մի գրելիք տողը»(Թումանյանի ընտանիքի Նամականին, 2009, էջ 7980):

Երբեմն Թումանյանը իր հոգվածներում քաղվածաբար բերում էր հայերենասիրական տողեր Բաֆֆու պոեզիայից, ինչպես , օրինակ, «Երկու մեծ թիֆլիսեցիներ», «Աղետ է, ոչ թե քաղաքականություն»: Վերջինիս մեջ բերվում են Բաֆֆու «Ձա՛յն տուր ով ծովակ» բանաստեղծության հետևյալ տողերը.

«...Ամեն կողմից պանդուխտ հայազգիք

Դիմեն դեպ յուրյանց սիրուն հայրենիք...»(Թումանյան, 1995, էջ 191):

Րաֆֆու բանաստեղծական տողերին հանդիպում ենք նաև «Կյանք և գրականություն» դասախոսության համառոտագրությունների մեջ. «Իսկ Րաֆֆին, որ դեռ Աղթամարա ծովի հետ խոսելիս իր մուսայից պատգամ էր առել-

Ավետիս տամ քեզ Նժդեհ պատանի.

Սրբեցեք քնարի լարերը ժանգոտ,

Եկեք Հայաստան երգով խանդոտ,

Զարթեցրեք հայոց աշխարհը մեռած:

Արդեն կազմում էր հեղափոխական ծրագիր՝ վեպերը, և հայ երիտասարդությունը տալիս էր կարոների ու ասլանների տիպերը» (Թումանյան, 1999, էջ 95): Վիպասանի ազատագրական ձգտումները բնորոշում է «Րաֆֆու թովիչ ծրագիրներ» (Թումանյան, 1999, էջ 96):

Եզրակացություն

Մեծ է եղել Րաֆֆի հրապարակախոսի և վիրասանի դերը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության և ազգային-հասարակական կյանքում: Դրա հավաստումն է նաև Թումանյանի և Րաֆֆու անձնական ու ստեղծագործական առնչակցության պատմությունը: Ժամանակի երիտասարդության վրա Րաֆֆու երկերի գաղափարական ազդեցության նշանակությունը դրսևորվել է բանաստեղծի՝ վիպասանի ստեղծագործությանը տրված գնահատականներում: Որքան էլ Թումանյանը համամիտ չլիներ Րաֆֆու որոշ հերոսների արարքների հոգեբանական հիմնավորման հարցում, այնուամենայնիվ, 19-րդ դարի հայ արձակի պատմության մեջ հաջատուոր Աբովյանից հետո Րաֆֆին էր՝ իր գրապատմական և ազգային -ազատագրական պատմության մեջ խաղացած դերով արժանացել ամենայն հայոց բանաստեղծի հիացմունքին ու բարձր գնահատականին, դարձել նրա ամենից սիրված գրողներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Եսայան Հ., Րաֆֆի, Նրա կյանքը և գրական գործունեությունը, Թիֆլիս, տպ. «Եպիխա», 1913, 24 էջ:

Հայկազունի Հ., Րաֆֆիի սգալի մահը և կենսագրությունը, Տիֆլիս, տպ. Մ. Կարդանյանի, 1888, 28 էջ:

Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանը Երևանում, Մատենա-

գիտական նկարագրություն, գիրք 1, Հայերեն գրքեր և պարբերական հրատարակություններ, կազմ. Ա. Հայրապետյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 584 էջ:

«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1913, # 281, դեկտեմբերի 16:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում (ԹԺՀ), Երևան, հ. 1. ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հրատ., Արևելք - Արևմուտք մատենաշար, 2019, 624 էջ:

Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 7, (քննադատություն և հրապարակախոսություն (1913-1922), Երևան., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, 718 էջ :

Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 6 (քննադատություն և հրապարակախոսություն (1887-1912), Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, 670 էջ:

Թումանյան Հովհ. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 8 (Ուսումնասիրություններ, օրագրեր և այլ նյութեր), Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 709 էջ:

Թումանյանի ընտանիքի նամականիս, Երևան, Էդիթ Պրինտ, 2009, 220 էջ:

Թովչյան Ս, Բաֆֆու Եսթետիկական հայացքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, 188 էջ:

Ջրբաշյան Էդ. Թումանյանը և հայ գրականության ավանդույթները// Բաֆֆի, Շիրվանզադե-Թումանյան էջ 169-213, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 511 էջ:

Սամվելյան Խ., Բաֆֆի (կյանքի ստեղծագործական ուղին), Երևան, «Արևիկ», 1987, 370 էջ:

Սարիկյան Ս., Հայկական ռոմանտիզմ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966. 556 էջ:

Սարիկյան Ս., Բաֆֆի. գաղափարների և կերպարների համակարգը, Երևան, Սովետ գրող, 1985, 300 էջ:

Վանանդեցի Գ., Բաֆֆիի վեպերը, Երևան, Պետհրատ, 1928, 136 էջ:

Բաֆֆի, Վեպիկներ և պատկերներ, հատ. 1-2, Թիֆլիզ, տպ. Հովհ. Մարտիրոսյանցի, 1891-1893, հ. 1-494 էջ, հ. 2, 390 էջ:

Բաֆֆի, Տաճկահայք (Հայոց հարցը), Թիֆլիզ, 1895, տպ. Մ. Շարաձեի, 80 էջ:

Բաֆֆի, Փռնչ, հատ. 1-2, Թիֆլիզ, տպ. Հ. Էնֆիաճյանի, 1874, հ. 2, 327 էջ:

Բաֆֆի, Սամուէլ, Թիֆլիզ, տպ. Հովհ. Մարտիրոսյանի, 1886, 749 էջ:

Բաֆֆի, ԴաւիթԲէկ, Թիֆլիզ, տպ. «Արոր» Տ. Նազարյանի, 1890, 763 էջ:

Բաֆֆի, Սամուէլ, Վիեննա, 1898, Այրի Աննա Բաֆֆի, 764 էջ:

Բաֆֆի, Խաչագողի յիշատակարանը Մաս 1-4, Թիֆլիզ, 1895, տպ. Հովհ. Մարտիրոսյանցի, 491 էջ:

Բաֆֆի, Խենթը: Ջալալեդդին, Մոսկուա, 1890, տպ. Մ.Բարխուդարյանի, 558 էջ:

Բաֆֆի, Մանուկյան Ա., Բաֆֆիի «Ջալալեդդինի» ծագումը, Երևան, Պետհրատ, 1932, 54 էջ:

Բաֆֆի, Ոսկի աքաղաղ, Թիֆլիս, տպ. Հովհ. Ս.Ստեփանյանց, 1882, 265 էջ:
Բաֆֆի, Ջալալեդդին, Վիեննա, 1905, այրի Աննա Բաֆֆի, 92 էջ:

REFERENCES

«Horizon» orat'ert', T'iflis, 1913, # 281, dektemberi 16.

Haykazuni H., Raffii sgali mahy yev kensagrut'yuny, Tp'khis, tp. M.Vardanyani, 1888, 28 ej.

Hovhannes T'umanyani andznakan gradarany Yerevanum, Matenagitakan nkaragrut'yun, girk' 1, Hayeren grk'ery yev parberakan hratarakut'yunner, kazm. A. Hayrapetyan, HSSH GA hrat., 1987, 584 ej.

Jrbashyan Ed. T'umanyanyev hay grakanut'yan avanduyt'nery// Raffi, Shirvanzade-T'umanyan ej 169-213, Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 1994, 511 ej.

Raffi, Jalaledin, Viyenna, 1905, ayri Anna Raffi, 92 ej.

Raffi, Dawit' Bek, T'ifliz, tp. «Aror» T.Nazaryani, 1890, 763 ej.

Raffi, Khach'agoghi yishatakarany Mas 1-4, T'ifliz, 1895, tp. Hovh Martirosyants'i, 491 ej.

Raffi, KHent'y. Jalaledin, Moskua, 1890, tp. M.Barkhudaryani, 558 ej.

Raffi, Manukyan S., Raffii «Jalaledini» tsagumy, Yerevan, Pethrat, 1932, 54 ej.

Raffi, P'unj, hat. 1-2, T'ifliz, tp. H. Enfiachyani, 1874, h. 2, 327 ej.

Raffi, Samuel, T'ifliz, tp. Hovh.Martirosyani, 1886, 749 ej.

Raffi, Samuel, Viyenna, 1898, ayri Anna Raffi 764 ej.

Raffi, Tachkahayk' (Hayots' harts'y), T'ifliz, 1895, tp.M.Sharadzev, 80 ej.

Raffi, Vepikner yev patkemer, hat. 1-2, T'ifliz, tp. Hovh. Martirosyants'i, 1891-1893, h. 1-494 ej, h.2-390 ej.

Raffi, Voski ak'aghash, T'iflis, tp. Hovh. S.Step'anyants', 1882, 265 ej.

Samvelyan KH., Raffi (kyank'i steghsagortsakan ughin), Yerevan, «Arevik», 1987, 370ej.

Sarinyan S., Haykakanr romantizm, Yerevan, HSSRR GA hrat., 1966 . 556 ej.

Sarinyan S., Raffi. gaghap'ameri yev kerpameri hamakargy, Yerevan, Sovetgrogh, 1985, 300 ej.

T'umanyan Hovh., Yerkeri liakatar zhoghovatsu 10 hatorov, h. 6 (k'nnadatut'yun yev hrparakakhosut'yun (1887-1912), Yerevan, GAA «Gitut'yun» hrat., 1995, 670 ej.

T'umanyan Hovh., Yerkeri liakatar zhoghovatsu 10 hatorov, h. 7, (k'nnadatut'yun

yev hraparakakhosut'yun (1913-1922), Yerevan., GAA «Gitut'yun» hrat., 1995, 718ej.

T'umanyan Hovh. Yerkeri liakatar zhoghovatsu 10 hatorov, h. 8 (Usumnasirut'yunner, oragrer yev ayl nyut'er), Yerevan, GAA «Gitut'yun» hrat., 1999, 709 ej.

T'umanyani yntanik'i namakanin, Yerevan, Edit' Print, 2009, 220 ej.

T'vop'ch'yan S, Raffuest' etikakan hayats'k'nery, Yerevan, HSSH GA hrat., 1971, 188 ej.

T'ZHH - T'umanyany zhamanakakits'neri husherum, Yerevan, h. 1. GAA M. Abeghyani anv. grakanut'yan instituti hrat., Arevelk' - Arevmutk' matenashar, 2019, 624ej.

Vanandets'i G., Raffiivepery, Yerevan, Pethrat, 1928, 136 ej.

Yesayan H., Raffi, Nra kyank'y yev grakan gortsuneut'yuny, T'iflis, tp. «Epokha», 1913, 24 ej.

Սուսաննա Հովհաննիսյան - բան.գիտ.դոկտոր, ՀՀԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի Հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 15 մենագրությունների և ավելի քան 200 գիտական հոդվածների:

Susanna Hovhannisyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher at the Department of Ancient Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan. Scientific interests: history of Armenian culture
sushovh@mail.ru

Сусанна Ованесян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела древнеармянской литературы Института литературы им. М. Абега НАН РА. Научные интересы: история армянской культуры и армянской классической литературы, туманяноведение. Автор 15 монографий и более 200 статей и публикаций. sushovh@mail.ru